

### 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. - Արո՛ւս, պիտակները խամրել են:

Նախկինում ի՞նչ գույն ունեին պիտակները: Պատասխանը թաքնված է ընդգծված նախադասության մեջ:

Ա. դեղին    Բ. կանաչ    Գ. գորշ    Դ. սպիտակ    Ե. ծիրանի

2. Պատասխանի ո՞ր տարբերակում է «թաքնվել» *անուրջ*-ի ընկերը:

Ա. հաղթական    Բ. գերազանցիկ    Գ. պարզորոշ    Դ. ոսկեշունչ    Ե. հարազատ

3. Պատասխանի տարբերակներից որի՞ ոսկին է զարդ պատրաստելու համար պիտանի:

Ա. Թագավորի գանձարանում ընդամենը մի քանի ոսկի էր մնացել:

Բ. Ոսկի հասկերով դաշտը ծփում է:

Գ. Ոսկի մարդ է Սահակը:

Դ. Այս դերձակը ոսկի ձեռքեր ունի:

Ե. Վաչագանը ոսկի երազներ էր տեսնում:

4. Հրանտը մի բառ մտապահեց, բաժանեց այն գումարեղիների և թղթի վրա գրեց դրանց գումարը: Ո՞ր բառն էր մտապահել Հրանտը:

*«վար»-ի հակառակը + հատապտուղ*

Ա. հերկել    Բ. վերելք    Գ. վերադարձ    Դ. վերելակ    Ե. վարսակ

5. Ի՞նչ դարձվածք է գաղտնագրվել:



Ա. թակարդ լարել

Բ. մեկի թակարդն ընկնել

Գ. պանիր տալ մեկին

Դ. մեկի թակարդը շրջանցել

Ե. թակարդ գցել մեկին

6. *Անխնա, մուծում, մուրալ, քաղաք, պարասպ* բոլոր բառերն ունեն նույն զարմանալի հատկությունը, սակայն դրանցից մեկը «երկերեսանի» է: Ո՞ր բառն է «երկերեսանի»:

Ա. անխնա    Բ. մուծում    Գ. մուրալ    Դ. քաղաք    Ե. պարասպ

7. Ո՞ր բառն է կազմվում *կամար* և *հագ* բառերի բոլոր տառերով:

Ա. կազմարար    Բ. մարզական    Գ. հարազատ    Դ. զարկերակ    Ե. համազարկ

8. Ո՞ր տառը նույն ձևով կստանձվի *բաղ, բակ, կաթ, մատ, հաց, կակաչ* բոլոր բառերին և կկազմի նոր բառեր:

Ա. ն    Բ. ու    Գ. ր    Դ. յ    Ե. ե

9. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

*Մեինիրեչյունինիուսեուցոինիչա*

Ա. սիրասուն մայրիկ  
Բ. սիրելի ուսուցչուհի  
Գ. սիրուն ուղեկից  
Դ. սիրելի ուսուցիչ  
Ե. սիրելի ընկեր

10. Այգեպանը գլուխկոտրուկ կազմեց իր հավաքած բերքով. հողի վրա փայտով գրեց *կաղամբ, մորի, կաղամբ, լոբի, սխտոր, լոլիկ, կոտեմ, բողկ* բառերը, հետո ջնջեց բառաշարքում երկու և ավելի անգամ հանդիպող բոլոր տառերը: Ո՞ր բառն այգեպանը կազմեց մնացած տառերով:

Ա. սեխ    Բ. բազուկ    Գ. սոխ    Դ. սմբուկ    Ե. բամբա

#### **4 միավոր գնահատվող առաջադրանքներ**

11. Պատասխանի տարբերակներից ո՞րն է կազմվում *երկնակամար* բառի բոլոր տառերով:

Ա. ամեն կամար    Բ. մեկ ներկարար    Գ. ակամա ներկա  
Դ. երկար նամակ    Ե. նման երամակ

12. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա. շրջանային անիվ    Բ. սև շրջանակ    Գ. կլոր ակնոց    Դ. սև ակնոց    Ե. անվի շրջան

13. *Արձիճ* և *կարաս* բառերն ունեն մի ընդհանուր ծանոթ, որն այդ բառերից մեկի «ընկերն» է և մյուսի գրաշրջումը (կազմված է մյուսի բոլոր տառերից): Ո՞ր բառն է ընդհանուր ծանոթը:

Ա. մանուկ    Բ. երկար    Գ. հովհար    Դ. ճագար    Ե. կապար

14. Պատասխանի ո՞ր տարբերակում կողք կողքի չեն դարձվածքն ու նրա «ընկերը»:

Ա. Այնպես ապշեց, որ քար կտրեց:  
Բ. Այնքան համառեց, որ երկու ոտքը մի մաշիկ դրեց:  
Գ. Այնքան հուզվեց, որ սիրտը լցվեց:  
Դ. Այնպես համաձայնեց, որ լեզուն կապվեց:  
Ե. Այնպես հասկացրեց, որ գլխի գցեց:

15. *Արեգակն իջել, փարվել է ծովին,  
Հրդեհ է դարձել ծովն ամբողջովին,  
Հրդեհն ամպերի ոտքերը վառել,  
Հորիզոններն է բոցերով առել:*

Պատասխանի տարբերակներից ո՞րը չկա բերված քառատողում:

Ա. գոլորշու զանգված    Բ. տաշած փայտ    Գ. ջրային տարածք  
Դ. առանց մնացորդի    Ե. երկնային լուսատու


16. Ի՞նչ կենդանի է որոշակի օրինաչափությամբ թաքնվել *տունկ, շիլա, սապատ, կարաս, արքա, կարաս, գուլպա, օթևան* բառաշարքում:

Ա. քամելեոն    Բ. բադակտուց    Գ. նապաստակ    Դ. գայլաձուկ    Ե. հովվաշուն

17. *Շիկակարմիր եմ գույնով,  
Պոկվել, թռչում եմ օդով,  
Եթե դու ինձ «գլխատես»,  
Մի կենդանի կտեսնես:* (հանելուկ)

Ա. աղվես    Բ. խարույկ    Գ. սկյուռ    Դ. հրանոթ    Ե. կայծ

18. Ո՞ր բառի «ընկերն» է գաղտնագրվել նկարելուկով:




Ա. քարափ    Բ. պանակ    Գ. պնակ    Դ. ափսոսանք    Ե. ձեռնոց

19. *Ալվարդը գնեց մեխ, ակնոց, խուրմա, նուշ, ակնամուս:* Ի՞նչ ծաղիկներ է սիրում Ալվարդը: Պատասխանը թաքնված է ընդգծված նախադասության մեջ:

Ա. վարդ, մեխակ, մանուշակ  
Բ. նշածաղիկ, երիցուկ, կակաչ  
Գ. հասմիկ, մանուշակ, վարդ  
Դ. շուշան, մեխակ, վարդ  
Ե. նարգիզ, մանուշակ, մեխակ

20. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա. Մանկական կատակ կա պատկերում:  
Բ. Մենակ կատուն ակ է գլորում:  
Գ. Մենակ մի նամակ կա:  
Դ. Մենակ կատակ կանեմ:  
Ե. Մենակությունը կատակ բան չէ:

### *5 միավոր գնահատվող առաջադրանքներ*

21. Անին գրաշրջումով *տարակարգ* բառից ստացավ նոր բառ: Ո՞ր տառն Անին ավելացնի ստացված բառի աջից կամ ձախից, որ ստանա մի նոր բառ:

Ա. է    Բ. դ    Գ. ա    Դ. մ    Ե. լ

22. Ը-ն ու Ռ-ն հարևաններ էին և երբեմն գիշերով սխալմամբ մտնում էին ոչ իրենց «տները»՝ *հերարձակ, հեռարձակել, փրփուր, կարճել, կառչել, առհամարիել, քառորդ, ձեռքակալել, կրճել*: Քանի՞ անգամ էր սխալվել Ռ-ն:

Ա. մեկ    Բ. երկու    Գ. երեք    Դ. չորս    Ե. հինգ

23. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուներով՝ վերնից ներքև, ձախից աջ, կկարդանք բառեր:


Ա. պաս – պատ – պոչ

Բ. աչք – ունք – քիթ

Գ. աչք – սպա – պոչ



Դ. քար – դար – վար

Ե. պատ – պար – պոչ

24. *Ճարտարաձիգ* բառում ձախից աջ, առանց տառերը տեղաշարժելու, ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված տարբեր բառեր կան, որոնք ունեն կենտ թվով տառեր և պահպանում են ուղիղ ձևը:

Ա. 5    Բ. 6    Գ. 8    Դ. 10    Ե. 13

25. Բերված պատկերներից վեցի անվանումները զույգ առ զույգ միանում են իրար ու կազմում երեք նոր բառ: Ո՞ր պատկերը մյուսներից ոչ մեկի հետ զույգ չի կազմում:



26. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

## ԾԽՆԾՄ

- Ա. ծախում եմ ծամոն
- Բ. ծխնին ծոռովում է
- Գ. ծախեն ու ծամեն
- Դ. ծուխն ու ծամոնը
- Ե. ծխնելույզը ծխում է

27. Ո՞ր առածն է գաղտնագրվել աղյուսակում:

Ի	Կ	Ն	Ի	Ն	Ղ	ՈԻ
Դ	Կ	Ա	Գ	Գ	Կ	Յ
Տ	Ո	Դ	Ե	Ն	Ա	Գ

- Ա. Երկու երնեկ մի տեղ չի լինում:
- Բ. Տաշած քարը գետնին չի մնում:
- Գ. Էրեխուն գործի դիր, հետը գնա:
- Դ. Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի:
- Ե. Գլորվեց խուփը, գտավ պուտուկը:

28. *Կարմիր հին գնդակը խճճվեց թփերում, յոթնամյա ու թովռան Էմիլին ահա զարմանքով երկնեքանգ թիթեռնիկ տեսավ: «Էմիլի՛, արդեն մեկնում ենք: Ներկ ու վրձին վերցրեք և բերեք չոր սավան, որ նկարեք», - ասաց մայրիկը:*

Ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված տարբեր թիվ կա բերված հատվածում:

- Ա. 8    Բ. 9    Գ. 10    Դ. 11    Ե. 12

29. Պատասխանի տարբերակներից ո՞րը պետք է գրվի բերված աղյուսակի երկնագույն վանդակներում ձախից աջ՝ վերից վար:

	1	2	3	4	5	6
Լ						
Ս						
Ի						
Օ						
Ի						
+						

- Ա. վարսակ    Բ. կարծիք    Գ. պատշար    Դ. համերգ    Ե. վարտիք

30. Պատասխանի տարբերակ տառերից չորսը գլխավորում են տարբեր շարասյուներ:  
Ո՞ր տառն է շարքայինը:

Ա.Ճ   Բ.Կ   Գ.Ժ   Դ.Ռ   Ե.Ա